— Այո՛:

— Շան որդիները հանգիստ չեն տալիս:

— Ովքե՞ր:

— Վանականները:

— Ինչո՞ւ:

— Անցեալ տարի մի դէպք պատահեց... Ծիծաղելի: Պատմեմ՝ չէք հաւատալ:

— Պատմեցէք, պատմեցէ՛ք...

— Առաջին օրից որ եկայ այստեղ, ես աշխատեցի, առանց կղերականներին շատ երես տալու, խիստ միջոցներ էլ նրանց դէմ չառնել: Ես այն կարծիքի եմ, որ պէտք է աւելի շուտ ժողովուրդը կրթել, աչքերը բանալ, տարածել լոյս եւ դիտութիւն: Այնպէս չէ՞...

— Ինչպէ՞ս չէ:

— Անցեալ ամառ այս կողմերում սոսկալի տաքեր արաւ. աննկարագրելի տաքեր. բաւական է ասել, որ երեք ամիս անձրեւ չեկաւ: Ոչ մի կաթիլ: Գիւղացիութիւնը տակն ու վրայ էր: Հայ գիւղերից եւ Թուրք գիւղերից պատգամաւորութիւններ էին գալիս ամէն օր խնդրելով, որ Խորհրդային իշխանութիւնը միջոցներ ցոյց տայ, մի բան անի: Հեշտ է ասել՝ մի բան անի: Ի՞նչ կարելի է անել երկնքի դէմ: Զորութիւն, տօթ, ցանքսերի այրում եւ տընտեսական սոսկալի վիճակ: Մի օր էլ ինձ յայտնեցին, որ գիւղացիները յուսահատ դիմել են Սեւանայ վանքը, մի ինչ որ Աւետարան բերելու համար, որպէսզի անձրեւ գայ: Ուշադրութիւն չդարձրի: Թո՛ղ իրենց եկեղեցու մէջ ինչ ուզում են անեն, մեզ ի՞նչ: Անցաւ մի քանի օր. իմացայ, որ որոշել են Թափօր կազմել եւ եկեղեցական արարողութիւնով երանելի այդ Աւետարանը տանել դաշտերը: Աշխատակիցներս սաստիկ զայրացան. դա՛ ի՞նչ նորութիւն էր:

Պէ՞տք է ներէի, որ տգէտ կղերականները փող կորզելու համար ժողովուրդից՝ նոյնքան տգէտ ժողովրդից՝ շահագործեն մասսաները, բանուորա-գիւղացիութեան իշխանութեան օրով:

Հէնց այս արահի մէջ ժողով ունեցանք: Գրբեթէ բոլոր ընկերները դէմ էին, բայց ես առաջարկեցի մի լաւ դաս տալ այդ պարոններին: 2×2=–ի նման պարզ էր, որ Աւետարանը հրաշք խոմ չպիտի գործէր եւ երկնքից անձրեւ չպիտի թափէր: Առաջնորդը եկաւ ինձ մօտ, գլխին մի լաւ աւետարան կարդացի: Ասում էր. ժողովուրդը պահանջում է, աւանդական սովորութիւն է եւայլն: Արտօնեցի թափօրը, մի պայմանով, որ ինքը եպիսկոպոսը չպիտի մասնակցի եւ այդպիսով արարողութիւնը պաշտօնական բնոյթ չպիտի կրի: Խոստացաւ:

Միւս օրը վեր կեցայ եւ վազեցի ծանրաչափի մօտ: Սլաքը միշտ նոյն գծի վրայ կանգնած էր, անփոփոխ: Տաք, չորութիւն եւ անձրեւի ոչ մի նշոյլ: Բնական է, որ, եթէ սլաքը դէպի փոփոխական եղանակը շարժած լինէր, թափօրը անմիջապէս պիտի արգիլէի: Խարեբայութիւնը պարզ կը լինէր: Կարգադրեցի հրահանգիչներ պատրաստել: Պարզ էր, որ թափօրը ոչ մի հետեւանք չպիտի ունենար, անձրեւ չպիտի գար եւ պէտք էր անմիջապէս յետոյ հրապարակի վրայ ժողովրդին բացատրել նախապաշարումների վնասակար, բացասական եւ առաջադիմութեան համար մահացու ազդեցութիւնը:

Եկեղեցու զանգերը տուին: Բոլոր գիւղերից մարդ է եկել: Ահագին բազմութիւն: Եւ ամէն կողմից էլ ոչխարներ են բերել՝ հարիւրներով: Տօ, եղբայր, մենք այստեղ ամէն մի ջոց ձեռք ենք առնում, որպէսզի կղերը անօթի սատկի, դու եկ տես, որ նրանք հարստանում են մեր աչքի առջեւ: Երկար պատարագեցին: Ես ծանրաչափը առջեւս նայում եմ. ոչ մի փոփոխութիւն:

Մէկ էլ տեսնեմ՝ դուրս եկան: Ամբողջ կղերը իրենց լաւագոյն զգեստներով եւ էն առջեւ ընկած, ո՞վ էք ուզում, որ լինի, ի՛նքը եպիսկոպոսը, որ ինձ խօսք էր տուել թափօրին չմասնակցել: Նախ՝ բարկացայ եւ ուզեցի թափօրը ցրել, յետոյ մտածեցի, որ գիւղացիները պիտի ասեն՝ վախեցաւ, ու անձրեւ չեկաւ, որովհետեւ թոյլ չտուի, որ թափօրը անցնի:

Ամէն կողմից ահագին բազմութիւն է թափուել, զանգակները անդադար զողանջում են, վարդապետները եւ քահանաները բարձրաձայն երգում են, իսկ եպիսկոպոսն էլ բարձր բռնել է Սեւանից բերած Աւետարանը: Ծանրաչափը միշտ անփոփոխ է:

Դէ, ի՞նչպէս ասեմ, ուզում էք հաւատացէք, ուզում էք մի հաւատաք, թափօրը հազիւ

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան